

ՅԱԼԵԼՈՒԱԾ Բ. 34.

Ա. Գրքի եր. 238 ծ.

(No. 577. ՆԺ.)

Աւետարան, փոքրագիր, մագաղաթ, գեղեցիկ նկարազարդուած, լաւ բոլորգիր, տնեւրի սկիզբը ոսկի գլխատառերով, ինչպէս եւ նշանակալից բառերը, «տր. Ած, հայր, Յս», մանրանկարչական տառերով սկսուած, առաջին տողը ոսկեգիր.

Նկարները. ա) Ղազարու յարութիւնը, բ) Մուտն յեմ. գ) Խորհրդաւոր ընթերիք. դ) «Վերնատուն-Յովսէփայ» Ուտնալուայ. ե) Խաչելութիւն. զ) Աւերումն դժոխոց. է) Խաչից իջնելը, պատանելը. ը) Աւետումն (աղբիւրի մօտ). թ) Քառասնօրեայ գալուստն ի տաճարն. ժ) Յարութիւն. ժա) Համբարձումն. ժբ) Միւսանգամ գալուստը, ստացողի եւ Ձաքարիա եղբօր պատկերներով. պատկերի տակ «Թվ. ԶԽԷ»:

Զի նկարած դիմացի երեսը, բայց ներքեւի լուսանցքում հազիւ ընթեռնելի կարմրադեղով գրուած է.

«Զբարեմխ կինն եւ գերկիւղածն Այ./գԱզիզն, որ Լատ կուծառայէ մեղ եւ/ ետ ընծա սբ. աւետարանիս. Յիշ. ի Քս. Թ. ԶԾԱ»:

ժգ) տաս խորանները:

ժդ) Մատթէոս եւ սկզբնազարդը. Մատթէոսի նկարի տակ.

«Զանարժան Աբրահամ. ստացիչ եւ նկարիչ սբ. աւետարանիս. Հանգերձ ծնողօք եւ վդատաք. յիշեսլիք ի սբ. եւ Ածամերձ. յաղօթս ձեր. եւ Ած. զձեզ յիշէ ամէն»:

ժե) Քի ծնունդը. ժզ) Մկրտութիւնը. ժէ) Լերան քարոզը:

Լուսանցքի զարդեր, մանրանկարչական տառեր, լուսանցքում բովանդակութեան պատկերներ. դիւահարի բժշկութիւնը, տաճարի՝ այսինքն երկու սիւնների վրայ գմբէթ, առաջին ջուրը թափուած է սկաւառակի մէջ, բաղարջակերաց տօնը. տառերը թռչնագիր, մարդագիր, բուսագիր. արուեստը Պիճակեանը յիշեցնող. — Մարկոս եւ սկզբնազարդը, լուսանցքում ողկոյղը ճաշակող կենդանի կամ եղջիւրաւոր կենդանի, լուսանցքում պայծառակերպութիւն՝ առանց եղիայի եւ Մովսէսի:

Մարկոսի վերջում.

«Թվ. ԶԽԷ. Ստաթէի վանքս ծաղկեցաւ»:

Յոհաննու վերջում, գլխաւոր յիշատակարանը, 380ր.

Փառք եղակի տրութեն. եւ եռահիսակ անձնաւորութեն. հաւր եւ որդոյ եւ հոգոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից ամէն:

Որք ըզմտաց աչս անաղաւտ եւ վճիտ ունիցին երկնանկատ դիտմամբ առ էականն լոյս եւ իմանալեացն տեսարան, նոցին ոչինչ է փոյթ բովանդակ բնաւին ինչ որ յաշխարհի եւ որ ընդ հոսանուտ եւ եղծանելի բնութես. բերին, այլ միանգամայն զհուր սիրոյն, զոր հուրն կենդանի արկ ի բանական բնութիւս. աւրջստաւրէ արծարծեն յոգի անշիջանելի բորբոքմամբ հոգեւորացն տուր եւ առութթ. որով եւ լուսաւորին ըստ բանի ածահայր. մարգարէին որ ասէ. պատուիրանք տն. լոյս են եւ լոյս տան աչաց: Արդ՝ ըստ նոյն ապացուցի ածայնոց. իրաց հետեւեալ, ածարան. եւ քաղ բարունապետն Աբրահամ: Եւ իմանալի աչաց տեսութթ. պայծառապէս եւ գերաբարար արտախայլեայլ, եւ փափազմամբ ածային. սիրոյն միշտ հոգով պարապեալ, խոկայր գերկնայինան եւ ազգի ազգի ճգամբ եւ չարչարանաւք ճընչէր զմարմինն ի յայսմ կենցաղոյս եւ ոչինչ համարեալ, որ ինչ յաշխարհի է. այլ միայն ստացուած կենդանի ստացեալ եւ զհոգէշունչ մատենաս զաւետարանական ածախաւս. քարոզութիւս. փրկչին մերոյ եւ Այ. յոյժ փափազանաւք եւ մեծատենչ ըզմամբ ստացաւ զածախաւս. մատենաս, որ յորջորջի աւետաւոր երկնից արքայութեն. ի յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ի ժառանգութի. ընտանեաց իւրոց կենդանեաց եւ ի փրկութի. հոգոց ննջեցելոց իւրոց: հօրն իւրոյ... (Ննջած է) եւ հաւրեղբաւրն ածարան. վրդտն. Աւագտիրի. եւ մաւրն իւր Գոնձին: Եւ աւագ եղբաւրն Դաւիթ քչին, եւ միւս եղբաւրն բարձմիտ եւ կուսակրաւն արեղային Ձաքարիայի. եւ կրտսեր եղբաւրն իւր միայնակեաց եւ սպասաւոր միաբանիցն (այս բառի գլխին տարբեր գրով, բայց կարծես նոյն թանաքով «յկրին»): Եւ այլ միւս եղբաւրն աշխարհի Մարգարին. եւ եղբաւրորդոյն իւր դեռաբոյս եւ կուսակրաւն արեղայի Վրդանիսի.:

Արդ գրեցաւ սայ ի յերկիրս Վայոյ ձորոյ, ի գաւառս Եղեգիս, ի սբ. ուխտս որ կոչի վերին Նորավանս, ընդ հովանեաւ սբ. Սիովնիս. եւ սբ. Ածածնիս. եւ այլ ամենայն սրբոցս, որ աստ կան հաւաքեալ բարեխաւսեյ առ տր. վասն մեր: Զեռամբ յողնամեղ, վտիտ Փանաքի, եղկելի եւ թշուառական Գրիգոր անարժան եւ ծուլ աբեղայի: ի խանութե. Ըռուստամին յազգէ տաճկաց: ի քաղաքն չահաստան որ է Թաւրէս: Եւ ի հայրապետութե. հայոց տն. Մարգարի յաթոռ սբ. էջմիածնին: Վասն որոյ աղաչեմք զամենեան, որ լուսաւորիք սովաւ կարդալով կամ աւրինակելով եւ հոգեւոր խրախութթ., յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զքաղ բարունին զԱբրահամ, զըստացող սորա եւ զճընաւդսն: իւր: Եւ զիս զանարժանս եւ զպարտականս բիւր քանքարոյ գրիգոր եւ զճնաւդս իմ յիշման արժանի առնել, եւ դուք յիշեալ լիջիք ի Քսէ. Այ. մերոյ ամէն: